

ԹՈՒՂԹ ԿՂԵՄԱՅ Ը. ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԱՌ ՓԻԼԻՊՊՈՍ
ԹԱԳԱՒՈՐՆ ՍՊԱՆԻԱՅ

(Վատիկանեան Դիւան, Arm. ե՛ր, հատոր 46, Թ. 281,
էջ 264:)

Սիրելի որդւոյ մերում ի Քրիստոս Փիլիպպեայ կաթողիկեայ թագաւորին Սպանիացւոց Կղեմէս Ը. Քահանայապետ :

Սիրելի որդի մեր ի Քրիստոս, ողջոյն եւ առաքելական օրհնութիւն :

Յովհաննէս Ղոփուզենց, մեծարեալ արքեպիսկոպոսն Տերզնոյ Հայոց, որ զթուղթս մեր զայս կաթողիկէ Մեծութեան Ձերում առաջի առնէ, յառաջ քան զաւուրս ինչ եկն ի սուրբ սեամս գլխոյն առաքելոց, առաքեալ առ մեզ ի մեծարոյ եղբօրէ Մեղքիսեղեկէ՝ ի գլխաւոր առաջնորդէ Հայոց, որ կաթողիկոսն եւ հայրապետ անուանեալ յորջորջի. զորոյ զթուղթն ընկալաք զառաքեալն ի ձեռն նորին Յովհաննու : Ի թղթիս յայսմիկ ճանաչէ նոյն Մեղքիսեղեկ զբարձրագոյն իշխանութիւն այսր սրբոյ առաքելական Աթոռոյ, յորում մեքն բազմիմք գահերէց առանց արժանեաց. եւ խոստանայ զնորին մեծութեան եւ ճոխութեան երթալ զհետ :

Ի նոյն յարեալ պատմէ մի ըստ միովէ եւ գոխրական հանգամանաց եւ զբազմազխմի տառապանաց այնր բովանդակ ժողովրդեան, որ ընդ երկաթեղէն լծով անհնարին բռնութեան Թուրքաց հարստահարի եւ ի դառնագոյն կապանս անկեալ հեծէ :

Խնդրէ արդ ի մէնջ աղերսանօք ե՛ւ յիւր